

Թ Ա Խ Ա Վ Հ Ա Յ Ա Տ Ա Ր Ե Ր

Փարիզի բժշկական լիութիւնը քուլիսի մէջ հաւաքոյթ մը սարց տօնելու համար Փարիզի համալսարանը աւարտող առաջին հայ բժիշկին՝ Գ. Սինավելունի վկարման 85 ամեակը Այդ առթիւ համօթ շլախտարոյժ փրոֆ. Կ. Աղաջանեանը ուսումնայ ժանօթ բժիշկներու մասին առաւ շահնկան ժանօթութիւններ, գորս մեր ընթերցողները ամփոփուած պիտի գտննն յետագայ յօդուածին մէջ իլլր.

Մուսանայ յայտնի բժիշկները կարելի է դասաւորել երեք խումբի: 1) Խնամող բժիշկներ, 2) զիտուն բժիշկներ և 3) քաղաքական և հասարակական գործիչ բժիշկներ, նկատի առնելով անոնց աւելի աշքի ընկնող գործունելութիւնը: Չունենալով ձեռքի տակ պէտք եղած նիւթը կը խօսիմ միմիայն իմ անձնական յիշողութիւնների վրայ և իմաստելով:

Հին բժիշկների մի մասը Դորբատի համալսարանէն էին, ուր չնայած անոր սուսական պետական հիմնարկութիւն ըլլալուն, երկար տարիներ դասախոսութիւնները գերմաններէն լեզուով կը կատարուէին: Այդ համալսարանում կը դասախոսէին գերմաններէն լեզուով վիրաբոյժ Bergmann, յիմարաբոյժ Krapelin, քիմիագէտ Alexandre Schmidt, որոնք համաշխարհային անուն կը վայելէին:

1 Խնամող բժիշկներ.— Մաս 45 տարի առաջ մեռաւ Թիֆլիզի մէջ թժ. լարկուսեանը: Հանգուցեալք յայտնի էր ամրող կովկասում իրուս խնամող բժիշկ, որի բժշկական գործունելութիւնը յարգանքով կը յիշէր Nothnagelը: Մասաւորապէս նոյն ժամանակ կը գործէր թժ. Յովիշաննէսանը, «Արձագանզ»ի խմբագիր Արգար Յովիշաննէսանի հայրը և թժ. Լիսիցեանը, որը նոյնպէս յայտնի էր իր խնամող բժիշկ և նոյնպէս լաւ հայ ընտանիքի մը հայր էր: Անոր որդին Սաեկանսար տուջին հայ զիմնագիտնը հիմնեց Կովկասում: Յայտնի էր Թիֆլիզում, նոյնպէս հին բժիշկ, որը մօտ 10—15 տարի տառաջ մեռաւ՝ Գասպարեանը: Նա, չնայած իր ծանր բնութեան, շատ սիրուած էր ամրող կովկասում: թժ. Գասպարեանի ժամանակակից էր թժ. Ալեւտիկ Բարանեանը՝ Օր. Մարգարիտ Բարանեանի հայրը:

թժ. Բարանեանը խնամող բժիշկ էր Նիկոլայ թագաւորի եղբօր մօտ, երբ վերջինս գահածառանգն էր Վերջին ժամանակներս մեռածերունի մանկաբարձ թժ. Մկրտչեանը (Թիֆլիզ) որ շատ յայտնի էր իր մասնագիտութեան մէջ և շատ ազգագուշ հայ մըն էր:

Բաքու մէծ անուն ունի այժմ ևս թժ. Վարդապետեանը: Հիւսիսային կովկասում (Արմաւիր) շատ յայտնի էր թժ. Սեմիրեանը: Պետերբուրգ մէծ գիրք ունեին մարթի հիւանդութիւնների մասնա-

գէտ թժ. կղեանը և Բուդուղեանը, որոնցից առաջինը զինուորական հիւանդանոցի մեծն էր, իսկ վերջինը կ'աշխատէր Ակադեմիի քլինիքում և հեղինակն է տասնեակ ժողովրդական բժշկական զրքոյկների: Այդ հաստարակութիւնների նշանակութիւնը անգնահատելի է:

II Գիտուն բժիշկներ.— Բրոֆ. Թումաս, բժշկական Ակադեմիի բրոֆ. Բոտքինի աշակերտը, Վարշաւայի համալսարանի բրոֆէսոր էր ներքին հիւանդութիւնների: Շատ զիտական աշխատութիւններ թողեց: Մօտ 35՝ տարի առաջ երիտասարդ մեռաւ. Թոքախտէ: Քանի մը տարի առաջ յեղափոխութեան ժամանակ Պետրոգրադի մէջ սպանուեցաւ աշխարհահռչակ բրոֆ. Պաւլովի օգնական և յետոյ բրոֆէսոր, բնախօս (physiologiste) վարդանեանը (Թիֆլիզեցի): Հանգուցեալը համեստ կերպով կ'օգներ իր բարեկամ Պաւլովին, ինքը աշխատելով միշտ փառքից հեռու մնալ: Մարդառէր, մեղմ, ազնիւ հոգի, որ միշտ սիրուած էր իր աշակերտներից և բարեկամներից: Անոր աշխատակիցն էր ուրիշ հայ բնախօս մը, Թիֆլիզցի Լեւոն Օքբելի, Սեւալովի տաղանդաւոր աշակերտը, որը այժմ Սիեւլովին պաշտօնը կը վարէ: Այս վերջինը շատ յայտնի աշխատութիւնների ունի պայմանաւոր բեֆլէկսների մասին (reflexe conditionel): Կազանի համալսարանում յայտնի էր երեխայոց հիւանդութիւնների մասն ազէտ բրոֆ. Խշիսան Արդութեան (Թիֆլիզեցի):

Նոյն համալսարանում յայտնի էր նաեւ աչքի հիւանդութիւնների մասնազէտ բրոֆ. Աղաքարեան (Յաշտարխանցի), իսկ Պետրոգրադում՝ ջլախտարոյժ բրոֆ. Աստուածատրեան Խարքովի համալսարանում յայտնի է քթի, կոկորդի և ականջի հիւանդութիւնների մասնազէտ բրոֆ. Սուլըւէլի: Երեւանի համալսարանում կ'աշխատի վիրարոյժ բրոֆ. Քեչք, (Նոր Նախիջեւանցի) որը յայտնի էր առաջ ևս իբրեւ կարող մասնագէտ:

III Քաղաքական եւ հասարակական գործիչ բժիշկներ եղած են: Բժ. Խատիսեան Աղեքսանդր, որը մեզ ամէնուս լաւ ծանօթ գէմք է: Նոյնպէս Բժ. շամօ Յիանջանեան ծանօթ իբրեւ ազգային գործիչ: Բժ. Վահան Արծրունի, որը այժմ Հայաստան բրոֆէսոր է, բայց միշտ յայտնի էր որպէս հասարակական գործիչ: Բժ. Յ. Այվազեանը՝ պետական Դումայի անդամ և յայտնի հասարակական գործիչ էր իր հայրենի Ախալցխային մէջ: Առանձին և աչքի ընկնող գէմք է ծերունի բժ. Բագրատ Նաւասարդեանը: Մաֆիի ամենթոյին մէջ նկարագրուած երիտասարդ, մարդասէր և անձնազն բժիշկը, որը անգնահատելի գործ կատարեց ուսւա բանակի և հայ գաղթականութեան համար Ղարսի շուրջը 1877 թ. պատերազմի ժամանակ, բժիշկ Բագրատ Նաւասարդեանն էր: Նոյն Բժ. Նաւասարդեանը ուսւահայ Բարե-

զարթական ընկերութեան հիմնադիրն է և մշտական նախագահն էր։
Վերջացնելով իմ խօսքը յոյս յայտնում եմ որ հայ ժողովուրդը
կ'ունենայ իր սեփական բժշկական գործոցը այն զարգացման վերայ
որ դիտութեան մէջ կը մոցնէ իր անհատական ուղղութիւնը։ Մեր
բոլոր տաղանդները առայժմ առար գործոցների սաներ են։

ԲՐԱՅ. Կ. ԱՂԱՋԱՆԵԼԻ,

Ը Ճ Ո Ւ Մ Ք Ե Խ Զ Ա Յ Ա Խ Ա Ր Ո Դ ։ Պ Ա Տ Ճ Ա Թ Ա Ե Ր Ք

Ահում կը նշանակէ մեծնալ, զարանալ բնականոն պայմաններու
մէջ, թէ հասակ նետել և թէ ծանրանալ։ Երբ մանուկը աշխարհ կու-
զայ, ան կը զանուի բնախօսական մասնաւոր պայմաններու մէջ։
Նախ միջազգայրը՝ կը փախուի, պազ և տաք կը սկսին անոր համար
զոյս թիւն ունենալ։ Այժմ ան կը չնչէ իր թոքերով։ Մարտզական
խողովակն ալ իր պահանջները ունի ազան անօթի է. լալ կը սկսի
և. կ'ուզէ ձձել Բնութիւնը այն տեսակ բարի մայր մըն է որ այս
նորեկ երախային վերապահած է երկու խոշոր ստինքներ՝ մաքուր
կաթով լիցուն։ Մնագործերութենէն մէկ կամ երկու որ վերջ՝ ստին-
քային վեղձերը արագ աշխատանքի կը լծուին, կը խոշորնան, կը
կարծրանան և անհամբեր կը սպասեն որ երկու պզտիկ չըթունքներ
իրենց ցաւը մնագացնեն։ Մօրը կաթը ազան բաւագոյն սնունդն է.
մօրը կաթով սնած ազայ մը՝ ուելի շուա կ'ածի, զիւրաւ կը մնձնայ
և արուեստական դիեցման ներկայացուցած անպատճենութենէն զերծ
կը մնայ ինչո՞ւ. որովհետեւ, առողջ մօր մը կաթը նախ թարմ է,
յեսոյ մաքուր է, միքրոս չի պարունակեր — համեւաքար եռացնելու
որեաք չկայ — իր ամբողջ կիսանիւթերը անօթար կը պահէ, եւ վեր-
ջապէս այնուէս մը բազազրուած է որ կը համապատասխանէ երա-
խային մարտզական կարգութեան Ընդհակառակն, կամուն կաթը
յաճախ թարմ չէ, կրնայ թթուիլ, միքրոսներ կը պարունակէ հում
վիճակի մէջ, մասնաւորաբար թուրախափ միքրոսը և, եփաւելու պա-
րագային, կենսանիւթերուն զլխաւոր մօսը կը կորսնցնէ։ Առկէ
զատ, անդիքա հորթին սահմանուած ըլլաբափ, զանազան սննդանիւթե-
րով ուելի հարուստ է քան կնոջ կաթը և այդ պատճառու զմուարամարս։
Ու բեմ կանապուութիւնը, սրսկով և քանակով, աճումը խանգա-
րող սկզբնական և հիմնական պատճառներէն մէկը կընայ րլլար։

Երբ երեխան մնձնայ, մնալառութիւնն է որ, զարձեալ որակով և
քանակով, կրնայիխանգարել ունումը՝ մանկութեան և պատանեկութեան